## 400ԱՄԵԱԿ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

**Ս. Էջմիածնի Գէորգեան Ճեմարանի Խմբագրութեան Մասնաժողով Հայոց Գրերի Գիւտի 1,500-ամեակի և Տպագրութեան 400-ամեակի առթիւ.**

Հայոց գրերի գիւտի 1,500ամեակի և տպագրութեան 400 ամեակի առթիւ Ն. Սրբութեան կարգադրութեամբ կազմուած և հաստատուած է խմբագրական մի մասնաժողով, որի վերայ պարտաւորութիւն է դրուած մի գիտական ժողովածու հրատարակել միացեալ երկու մեծ տօներին վայել լրջութեամբ և ճոխութեամբ։ Ժողովածուի նիւթ պէտք է լինի ընդարձակ մտքով հասկացուած հայագիտական ամէն ամէն մի յօդուած, այսինքն Հայ պատմութեան, մատենագրութեան, լեզուի, հնագիտութեան և արուեստի, աշխարհագրութեան, ազգագրութեան, ևն. վերաբերեալ, որ կ'ընդունուի խմբագրական մասնաժողովի կողմից։ Յօդուածի ծաւալը պէտք է լինի ոչ աւելի. քան երկու տպագրական թերթ 16°։ Իւրաքանչիւր երեսի համար նշանակուած է մի րուբլի վարձատրութիւն։ Այսու Մ. Աթոռի կարող միաբաններից և Ճեմարանի ուսուցիչներից զատ հրաւիրւում են և դրսի Հայ բանասէրները մասնակցելու մեր կազմելիք ժողովածուին։ Յօդուածները պէտք է ուղարկուեն ոչ ուշ քան Հոկտեմբերի վերջը։ Չընդունուած յօդուածները հեղինակների ցանկութեան համեմատ յետ կ'ուղարկուին իրենց։

Խմբագրական Մասնաժողովի Նախագահ՝ ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Քարտուղար՝ ՍՏԵՓԱՆ ԿԱՆԱՅԵԱՆՑ